ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԳՅՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ
ՊԱՐՈՆ Ա. ԳԱԼՋՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գալջյան.

Ի պատասխան Ձեր 13.12.2019թ. հ.01/485 գրության՝ տեղեկացվում է, որ Արցախի փողոցի 4-րդ նրբանցքի հ.10 4-րդ կարգի վթարային շենքի բնակիչների վերաբնակեցման գործընթացը կազմակերպելու նպատակով շենքում իրականացված հաշվառման և չափագրման աշխատանքների ընթացքում պարզվել է, որ գրությամբ մատնանշված հ.424 համարակալումով բնակարանը փաստացի միացված է հ.423 բնակարանին:

Նշված բնակարանում, համաձայն Շենգավիթ վարչական շրջանի թիվ 27 տեղամասի լիազոր ներկայացուցչի կողմից տրամադրված տեղեկանքի և ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության Շենգավիթի անձնագրային բաժանմունքի 09.01.2019թ. հ.22/1-24 գրության, հաշվառված և փաստացի բնակվում են Սուրիկ Բաղդասարյանը և Մարիամ Բաղդասարյանը:

Հաշվի առնելով վերոգրյալը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2009 թվականի փետրվարի 5-ի հ.172-Ն որոշմամբ հաստատված դրույթները՝ Երևանի քաղաքապետի 01.07.2019թ. հ.2245-Ա որոշմամբ Արցախի պողոտայի 4-րդ նրբ. հ.10 շենքի հ.423 բն. բնակիչներ Սուրիկ և Մարիամ Բաղդասարյաններին հատկացվել է Շինարարների փողոցի հ.6/1 շենքի հ.59 հասցեում գտնվող բնակարանը:

Միաժամանակ տեղեկացվում է, որ խնդրի վերաբերյալ առկա է դատական վեճ, որի շրջանակներում ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 06.06.2017 թվականի վճռով բավարարվել է մի շարք քաղաքացիների՝ այդ թվում և Հասմիկ Հովհաննիսյանի, բողոքը՝ ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքը ճանաչելու վերաբերյալ, սակայն ՀՀ վճռաբեկ դատարանը 06.07.2018թ. կայացրած վճռով բեկանել է ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 06.06.2017 թվականի որոշումը և Արթուր Գրիգորյանի, Քրիստինե Մկրտչյանի, Հարություն Ումուրշատյանի, Վարդիթեր Կարադավուկյանի, Հասմիկ Հովհաննիսյանի, Վաչիկ Պետրոսյանի դիմումը՝ գույքը տիրազուրկ ճանաչելու և ձեռքբերման վաղեմության ուժով դրա նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու պահանջների մասին՝ թողնելով առանց քննության:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ